

# Մինչև ձեր ապաստանի ընթացակարգի սկսվելը

## **Ինչո՞ւ է ձեզ տրվում այս բրոշյուրը**

Դուք ցանկանում եք Նիդերլանդներում ապաստան խնդրել:  
Ապաստանի ընթացակարգը չի սկսվում ձեր՝ Նիդերլանդներ  
անմիջապես հասնելուն պես: Ձեզ ժամանակ է տրվում  
ճամփորդությունից հետո հանգստանալու և ապաստանի ընդհանուր  
ընթացակարգին նախապատրաստվելու համար: Ձեզանից նաև  
պահանջվում են մի շարք բաներ: Այս ամենի համար տրվում է մինիմում  
վեց օր ժամանակ: Այն կոչվում է հանգստի և նախապատրաստման  
ժամանակաշրջան (RVT):

Այս բրոշյուրը կարդալով դուք կարող եք քայլ առ քայլ ծանոթանալ  
նշված հանգստի և նախապատրաստվելու ժամանակահատվածում  
ապաստանի ընթացակարգի հաջորդականությանը:

# Քայլ 1. Դիմելը և գրանցվելը


Դուք կդիմեք Տեր Ապելի ապաստանի դիմումի կենտրոնական բաժնին: Միգրացիայի և հպատակագրման ծառայության (IND) աշխատակիցները կգրանցեն ձեր անձնական տվյալները: Թղթի վրա կամ համակարգչում կրացնեք մի հարցաթերթիկ, որից հետո կգնաք Տեր Ապելի կամ մեկ այլ բնակավայրի Օտարականների ոստիկանության (AVIM) բաժին:



Օտարերկրացիների հարցերով զբաղվող ոստիկանությունը (AVIM) Նիդերլանդների ոստիկանության բաժանմունքներից մեկն է և օտարերկրացիներին Նիդերլանդներում պահում է հսկողության տակ:

Օտարերկրացիների հարցերով զբաղվող ոստիկանության աշխատակիցները գրանցում են ձեր անձնական տվյալները, ինչպիսիք են ձեր ծննդյան ամսաթիվը և քաղաքացիությունը: Նրանք խուզարկում են նաև ձեր հագուստը և իրերը, լուսանկարում են ձեզ և վերցնում ձեր մատնահետքերը: Ձեզ տրվել է մի բրոշյուր, որում բացատրվում է մատնահետք տալու պատճառը: Օտարերկրացիների հարցերով զբաղվող ոստիկանությունը ը ձեզ տալիս է մի բրոշյուր, որտեղ բացատրվում է, թե ինչու են նրանք մատնահետքեր վերցնում:

Օտարերկրացիների հարցերով զբաղվող ոստիկանության աշխատակիցների կողմից կարող են նաև ձեզ հարցեր տրվել ձեր ճանապարհի վերաբերյալ, կամ՝ արդյոք նախկինում դիմել եք ապաստանի համար այստեղ կամ մեկ այլ եվրոպական երկրում, և թե ձեր ընտանիքի անդամները գտնվում են այստեղ կամ Եվրոպական մեկ այլ երկրում: Արդյոք ունեք դուք փաստաթղթեր, որոնք կարող են ապացուցել ձեր



Նիդերլանդների Փախստականների աջակցության կենտրոնը մարդու իրավունքների անկախ մի կազմակերպություն է, որն ստեղծված է փախստականների շահերը պաշտպանելու համար: Փախստականների աջակցության կենտրոնը ձեզ տեղեկություններ է տրամադրում և բացատրում ապաստանի գործընթացը, տեղեկացնում է և օժանդակում անձամբ ձեզ այս ընթացակարգի ժամանակ և միջնորդում այլ կազմակերպությունների հետ խնդիրներ ունենալիս: Կենտրոնը սերտ համագործակցում է ձեր փաստաբանի հետ: Փախստականների աջակցության կենտրոնը ձեր ապաստանի դիմումի վերաբերյալ որոշում չի կայացնում:

ինքնությունը, ինչպիսիք են անձնագիրը, նույնականացման քարտը, ծննդյան վկայականը կամ վարորդական իրավունքի վկայականը: Կամ ունեք արդյոք փաստաթղթեր, որոնք կարող են հաստատել ձեր ճանապարհը և փախստականի ձեր պատմությունը, ինչպիսիք են ինքնաթիռի տոմսերը, նստեցման կտրոնը, դիպլոմներ, դատարանի վճիռներ կամ հողվածներ թերթերից: Նման դեպքում ներկայացրեք այդ փաստաթղթերը գրանցման ժամանակ կամ փորձեք այդ փաստաթղթերը ձեռք բերել մինչև ձեր ապաստանի ընթացակարգի սկսվելը: Այս հարցում ձեզ կարող է օգնել Փախստականների աջակցության կենտրոնի աշխատակիցը:

Ձեր փաստաթղթերի իսկությունը ստուգվում է մասնագետների կողմից: IND-ն օգտագործում է այս փաստաթղթերը ձեր ապաստանի դիմումի քննարկման ժամանակ


**Ուշադրություն.** Ձեր անձնական տվյալները և ձեր փաստաթղթերը կարևոր են ձեր ապաստանի դիմումի քննարկման համար: Եղեք լիիրավ և ստուգեք, թե արդյոք ձեր տվյալները լիարժեք ու ճիշտ են գրառված: Երբեք դեմ մի նետեք ձեր անձնական փաստաթղթերը: Նիդերլանդների իշխանությունը երբեք չի փոխանցի ձեր երկրի ղեկավարությանը, այն մասին որ դուք Նիդերլանդներում դիմել եք ապաստան ստանալու համար:

# Քայլ 2. Թոքախտ հիվանդության հետազոտություն

Թոքախտը (TBC) ծանր հիվանդություն է, որը շատ տարածված է աշխարհում, և հավանաբար նաև այն երկրում, որտեղից դուք եք եկել: Թոքախտի բացիլակիր ձևով հիվանդները կարող են մյուս մարդկանց վարակել, օրինակ՝ հազարու կամ փոշտալու միջոցով: Այդ իսկ պատճառով Տեր Ապելում ձեր դիմելու ժամանակ դուք կենթարկվեք այս հիվանդության հետազոտության: Թոքախտը ինֆեկցիոն հիվանդություն է, որը մեծ մասամբ գտնվում է թոքերում: Այս պատճառով հետազոտությունը կատարվում է թոքերի նկարահանումով: Եթե դուք հիվանդ լինեք թոքախտով, ապա Նիդերլանդներում դուք կստանաք դեղորայքային բուժում: Այս դեպքում ապաստանի ընթացակարգը կսկսվի բուժումից հետո:

# Քայլ 3. ներկայանալու հարցազրույց

Ապաստանի դիմումի հետ կապված հարցազրույցի ժամանակ IND բաժինը ձեզ հարցեր կտա միայն ձեր անձի, ինքնության և ծագման մասին: Երբեմն կարող են տրվել նաև լրացուցիչ հարցեր՝ ծագման մեկ ուրիշ երկրից գալու դեպքում: Ապաստանի դիմումի հետ կապված հարցազրույցի ժամանակ հարցեր չեն տրվում դեպի Նիդերլանդներ փախուստի պատճառների մասին:




Immigratie- en Naturalisatiedienst  
Ministerie van Veiligheid en Justitie

Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը (IND) Նիդերլանդների Արդարադատության և անվտանգության նախարարության բաժիններից մեկն է: IND-ի աշխատակիցները ձեզ հետ զրույցներ են վարում ձեր ինքնության, ազգության, ճամփորդության ուղու և ձեր երկրից մեկնելու պատճառների վերաբերյալ: Նրանք քննում են ձեր անձնական պատմությունը և ձեր երկրի իրավիճակը: Դրանից հետո նրանք որոշում են, արդյոք դուք կարող եք (ժամանակավորապես) մնալ Նիդերլանդներում, թե պետք է վերադառնաք ձեր երկիր կամ տեղափոխվեք մեկ այլ եվրոպական երկիր

# Քայլ 4. Կացարան

Օտարերկրացիների հարցերով զբաղվող ոստիկանությանը դիմելու պահից սկսած դուք Նիդերլանդական իշխանության կողմից ստանում եք կացարան, կերակուր և բժշկական խնամք: Ձեր դիմելը, գրանցումը և թոքախտ հիվանդության ստուգումը տևում է ոչ ավելի, քան մաքսիմում երեք օր: Տեր Ապիլի Օտարերկրացիների հարցերով զբաղվող ոստիկանության գրասենյակի մոտ Փախստականների ընդունելության կենտրոնական մարմնի (COA)


կացարանն է: Այստեղ դուք կարող եք գիշերել: Ձեր դիմելուց, գրանցվելուց և IND-ում ներկայանալու հարցազրույցից հետո դուք կտեղափոխվեք Փախստականների ընդունելության կենտրոնական մարմնի (COA) մեկ այլ կացարան: Փախստականների այս կենտրոնը գտնվում է այն գրասենյակի մոտակայքում, որտեղ Միգրացիայի և հպատակագրման ծառայությունը քննարկում է ձեր ապաստանի հայցը:



**COA** Centraal Orgaan opvang asielzoekers

Փախստականների ընդունելության կենտրոնական մարմինը (COA) հոգ է տանում Նիդերլանդներում փախստականների ընդունելության և ուղեկցության համար: COA-ն հոգ է տանում, որպեսզի դուք կացարան, կերակուր և հիվանդության ծախսերի ապահովագրություն ստանաք: Դուք կարող եք նաև դիմել COA-ին, որպեսզի նա օգնի ձեզ կապ հաստատելու բժշկի հետ: COA-ն անկախ կազմակերպություն է և ձեր ապաստանի դիմումի վերաբերյալ որոշում չի կայացնում:

COA-ի որևէ կացարանում ապրած ժամանակ առողջապահական կենտրոնից կստանաք հրավերքի նամակ առողջական վիճակի վեր տեղեկատվության գրույցի համար: Այդ գրույցը կվերաբերի ձեր առողջական վիճակի, ինչպես նաև ձեր ունեցած հնարավոր առողջական խնդիրների մասին: COA-ի որևէ կացարանում ապրած ժամանակ դուք կստանաք ճշգրիտ բժշկական օգնություն:




**gza** healthcare

**Ապաստան հայցողների առողջապահության բաժինը (GZA)** մի կազմակերպություն է, որին կարող եք դիմել հիվանդանալու դեպքում կամ առողջական ցանկացած հարցերով: Ապաստան հայցողների կենտրոնացման ցանկացած բաժնում (COA) կամ Ապաստան հայցողների կենտրոնացման բաժնին մոտ (COA) գործում է Ապաստան հայցողների առողջապահության բաժինը (GZA): GZA բաժինը ձեր համար կարող է հանդիպումներ կայացնել որևէ բժշկի օգնականի, բուժքրոջ, GZA բաժնի հերթապահ բուժօգնողի կամ տնային բժշկի հետ: Ցերեկվա կամ գիշերվա ցանկացած ժամերին դուք կարող եք զանգահարել առողջապահությանը վերաբերող հարցերով զբաղվող հերթապահ բաժին հետևյալ հեռախոսահամարով՝ 088 112 21 12: Առողջապահությանը վերաբերող հարցերով երկուշաբթի օրվանից մինչև ուրբաթ կարող եք զանգահարել նշված հեռախոսահամարով, օրինակ. եթե կարիք ունեք ստանալ ուղեգիր որևէ բժշկի/բուժմասնագետի դիմելու համար:

### Քայլ 5. Լուսաբանում

COA-ի կացարանում դուք կարող եք հանգստանալ Նիդերլանդներկատարած ուղևորությունից հետո: Դուք կարող եք նաև նախապատրաստվել ապաստանի ընդհանուր ընթացակարգի համար: Որոշակի դրության պայմաններում կամ կանցնի ձեր RVT-ի ժամկետը կամ էլ անմիջապես կանցնեք ապաստանի դիմումի ընդհանուր գործընթացին: Այս կացարանում Փախստականների աջակցության կենտրոնը ձեզ կտրամադրի ապաստանի ընթացակարգի մասին տեղեկություններ և բժշկական խորհուրդ: Այս հարցազրույցի ընթացքում թարգմանիչն կօգնի թարգմանելով այն ամենն, ինչ-որ կատեք Փախստականների աջակցության կենտրոնի

աշխատակցին: Դուք կստանաք նաև մի բրոշյուր, որում գրված է, թե ինչ է տեղի ունենում այս ապաստանի ընթացակարգի ժամանակ: Փախստականների աջակցության կենտրոնի աշխատակիցները կտան նաև տեղեկություն և կօգնեն ձեզ ապաստանի ընթացակարգի ժամանակ: Փախստականների աջակցության կենտրոնի ծառայություններն անվճար են: Ձեր մասին տեղեկությունները գաղտնի են պահվում:



**FMMU**

Կացարանում դուք հանդիպում կունենաք Ուտրեխտի դատական բժշկական ընկերության (FMMU) բուժաշխատողի հետ, որը ձեզ կհարցնի, թե դուք կամենում եք մասնակցել բժշկական հետազոտության: Այդ հետազոտության նապատակն է հաստատել, թե դուք արդյոք հոգեկան և/կամ ֆիզիկական խնդիրներ ունեք, որոնք կարող են ազդեցություն ունենալ IND-ի հետ տարվող ձեր գրույցների վրա:

### Քայլ 6. Բժշկական խորհուրդ

Հետազոտության ընթացքում բուժաշխատակիցը ձեզ հարցեր կտա: Այս հետազոտության ընթացքում թարգմանիչը ձեզ կօգնի՝ թարգմանելով այն ամենն, ինչ կատեք դուք և բուժաշխատողը: Մեծ մասամբ այն տեղի է ունենում հեռախոսով: Այդ ժամանակ թարգմանիչն անձամբ ներկա չի գտնվում: Անհրաժեշտության դեպքում բուժաշխատողը ձեզ կուղարկի բժշկի մանրագնի հետազոտության պատասխանը: Բուժաշխատողը կամ բժիշկը IND-ին կհայտնեն հետազոտության արդյունքների մասին: Դա տեղ գտնի միայն ձեր համաձայնության դեպքում: Ձեր ապաստանի ընթացակարգի ժամանակ IND-ն հաշվի կառնի ձեր առողջական վիճակի մասին տեղեկությունը:

Կարևոր է, որ անկեղծ լինեք ձեր հավանական հոգեկան և ֆիզիկական խնդիրների հարցերում և դրանք պատմեք բուժաշխատողին կամ բժշկին: Եթե դուք սպիներ ունեք, ապա հարկավոր է, որ այդ մասին հայտնեք բուժաշխատողին: Բժշկական հետազոտության զեկուցագիրը գաղտնի է պահվում: Բժշկական հետազոտությունը պարտադիր չէ: Բժշկական հետազոտության ծախսերը ձեր պարագայում անվճար են:

Եթե դուք չեք կամենում մասնակցել բժշկական հետազոտությանը, ապա կարող եք այդ մասին հայտնել բուժաշխատողին: Այդ դեպքում ձեր ապաստանի ընթացակարգի ժամանակ IND-ն հաշվի կառնի ձեր առողջական վիճակը: Այդ բժշկական խորհուրդը կապված չէ այն բուժօգնության հետ, որից դուք կարող եք օգտվել COA-ի Փախստականների կենտրոնում բնակվելու ընթացքում:

### Քայլ 7. Փաստաբանական օգնություն

Ապաստանի ընթացակարգի ժամանակ դուք ստանում եք փաստաբանի օգնություն: Այդ փաստաբանն գործում է անկախ Նիդերլանդների իշխանությունից: Իրավաբանների պալատի միջոցով դուք կստանաք հրավեր ձեր փաստաբանի հետ գրույցի համար: Կարիք չկա, որ դուք ինքներդ փաստաբան փնտրեք: Քանի որ ապաստանի ընթացակարգի ժամկետները շատ կարճ են: Իրավաբանների պալատը հոգ կտանի, որպեսզի ձեզ ժամանակին փաստաբան հատկացնեն: Եթե դուք արդեն ունեք փաստաբան, ապա այդ մասին հայտնեք ապաստանի դիմումի կարճ հարցազրույցի ժամանակ: Ամեն օր ստուգեք ձեր փոստը: Ձեր փաստաբանի հետ առաջին գրույցը խիստ կարևոր է ձեր ապաստանի ընթացակարգի համար, և, այդ իսկ պատճառով էլ դուք իրավունք չունեք այդ հնարավորությունը բաց թողնել: Այս գրույցի ժամանակ փաստաբանը ձեզ կնախապատրաստի IND-ի հետ կայանալիք հարցազրույցներին: Ձեր փաստաբանի հետ այս նախապատրաստական գրույցը տեղի կունենա

փաստաբանի գրասենյակում: Ձեզ կտան նրա մոտ գնալու ճանապարհի նկարագրիչը և գնացքի կամ ավտոբուսի անվճար տոմս: Այս հարցազրույցի ընթացքում թարգմանիչն կօգնի թարգմանելով այն ամենն, ինչ կխոսեք դուք և ձեր փաստաբանը, որի աջակցությունը ձեր պարագայում ավճարել է: Ձեր մասին տեղեկություններ գաղտնի է պահվում:

## Raad voor Rechtsbijstand legal aid

Իրավական աջակցության խորհուրդը հոգ է տանում, որպեսզի դուք ստանաք փաստաբանի օգնություն, երբ դուք ինքներդ չեք կարող վճարել: Իրավական աջակցության խորհուրդը վարձատրում է այս փաստաբանին ձեզ ցուցաբերած օգնության համար: Փաստաբանը չի ծառայում Իրավական աջակցության խորհրդում: Փաստաբանը անկախ իրավական աջակցություն է ցուցաբերում և օգնում է ձեզ ձեր ապաստանի ընթացակարգում:

## Ապաստանի ընթացակարգը

Օտարերկրացիների հարցերով զբաղվող ոստիկանությանը դիմելուց հետո մինիմում վեց օր կտևի, մինչև տեղի կգտնի ձեր առաջին հարցազրույցը IND-ում: Գործնականում այն կարող է մաս ավելի երկար տևել: COA-ի կացարանում դուք կստանաք մի նամակ, որով IND-ն ձեզ կիրավորի այս առաջին հարցազրույցի: Ապաստանի ընթացակարգի վերաբերյալ ավելի շատ տեղեկություններ դուք կարող եք ստանալ Փախստականների աջակցության կենտրոնից մի քանի օրվա ընթացքում (տես՝ քայլ 5):

## Ձեր դիմումը հետ վերցնելը

Ցանկացած պահ դուք կարող եք ձեր դիմումը ետ վերցնել: Այս դեպքում խորհուրդ է տրվում կապ հաստատել ձեր փաստաբանի հետ կամ անմիջապես դիմել IND-ին: Եթե դուք ետ վերցնեք ձեր դիմումը, ապա, որպես հետևանք, դուք այլևս չեք կարող բնակվել Նիդերլանդներում՝ իհարկե, բնակության իրավունք չունենալու դեպքում: Դիմումը ետ վերցնելուց հետո դուք այլևս բնակության իրավունք չեք կարող ունենալ: Ապաստանի հայցից հրաժարվելու դեպքում ձեր վրա կարող է դրվել այս երկիր մուտք գործելու արգելք/ մուտքի արգելք: Այդ պատճառով դուք չեք կարող վերադառնալ կամ մնալ եվրոպական մի շարք երկրներում: Երկիր մուտք գործելու սահմանված արգելքի պատճառով դուք այլևս իրավունք չեք ունենալ

այդ երկրներ մուտք գործել և այդ երկրներում մնալ: Ապաստանի հայցից հրաժարվելու դեպքում էլ հնարավորություն ունեք նորից դիմել ապաստան ստանալու համար, թե նույնիսկ ձեր վրա դրված մուտքի արգելքը դեռ ուժի մեջ է:

## Անձնական տվյալների մշակումը

Անձնական տվյալները ձեր անձին վերաբերող բոլոր տեսակի տեղեկություններն են: Ստորև գրված է այս գրքույկով զբաղվող բոլոր կազմակերպությունների անունները: Այդ կազմակերպությունները մշակում են ձեր անձնական տվյալները՝ ապաստանի հայցի, դիմումի կամ որևէ խնդրանքի դեպքում: Նրանք դիմում են ձեզ՝ իմանալու ձեր, ինչպես մասնա կազմակերպությունների կամ մարդկանց տվյալների մասին, եթե կա դրա անհրաժեշտությունը: Այս կազմակերպությունները օգտագործում և պահում են ձեր տվյալները և փոխանցում դրանք այլ կազմակերպությունների, եթե դա պահանջվում է օրենքով: Գաղտնիության օրենսդրության մեջ նշված է ձեր տվյալները մշակող կազմակերպություններին վերաբերող պարտավորությունների մասին: Օրինակ՝ նրանք պետք է ուշադիր և անվտանգ ձևով առնչվեն ձեր անձնական տվյալներին: Գաղտնիության օրենսդրության մեջ նշված է մասնա ձեր իրավունքների մասին, օրինակ՝

- կազմակերպություններում թափանցել ձեր տվյալներին վերաբերող հարցերում;
- տեղեկանալ, թե կազմակերպությունները ինչու և ինչ նպատակով են օգտագործում ձեր տվյալները:
- տեղեկանալ, թե նրանք որ կազմակերպություններին են փոխանցել ձեր տվյալները:

Ցանկանալով եք ավելի իմանալ ձեր անձնական տվյալների և իրավունքների մասին, ապա կարող եք թափանցել այդ կազմակերպությունների կայքերը: Այս գրքույկի ստորին մասում գրված է այդ կայքերի հասցեները:

## Հաճախ տրվող հարցեր

Ունե՞ք հարցեր այս տեղեկատվական թերթիկը կարդալուց հետո: Դուք կարող եք այդ հարցերը տալ ձեր փաստաբանին կամ COA-ի կամ էլ Փախստականների աջակցության կենտրոնի աշխատակիցներից մեկին:

### Որևէ բողոք ունե՞ք

Բոլոր կազմակերպությունները, որոնք ներգրավված են ապաստանի ընթացակարգում, փորձում են աշխատել պրոֆեսիոնալ և հոգատար կերպով: Սակայն, եթե դուք գտնում եք, որ որևէ կազմակերպություն ձեր նկատմամբ ոչ ճիշտ վերաբերմունք է ցուցաբերել, ապա կարող եք բողոքել: Նման հարցում ձեզ կարող է օգնել ձեր փաստաբանը կամ Փախստականների աջակցության կենտրոնի աշխատակիցներից մեկը:

### Այս տեղեկատվությունը հետևյալ կազմակերպությունների միասնական հրապարակումն է.

Centraal Orgaan opvang asielzoekers | [www.coa.nl](http://www.coa.nl)  
Փախստականների ընդունելության կենտրոնական մարմին  
Dienst Terugkeer en Vertrek | [www.dienstterugkeerenvertrek.nl](http://www.dienstterugkeerenvertrek.nl)  
Վերադարձի և մեկնման ծառայություն  
Immigratie- en Naturalisatiedienst | [www.ind.nl](http://www.ind.nl)  
Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն  
Raad voor Rechtsbijstand | [www.rvr.org](http://www.rvr.org)  
Իրավական աջակցության խորհուրդ  
VluchtelingenWerk Nederland | [www.vluchtelingenwerk.nl](http://www.vluchtelingenwerk.nl)  
Նիդերլանդների փախստականների աջակցության կենտրոն

Ministerie van Veiligheid en Justitie, directie Migratiebeleid  
[www.rijksoverheid.nl](http://www.rijksoverheid.nl)

Հրապարակվել է Արդարադատության և անվտանգության նախարարության միգրացիայի վարչության հանձնարարությամբ:

Այս հրատարակման բովանդակությունը չի կարող ձեզ իրավունքներ վերապահել: Եթե թարգմանությունը առաջացնում է մեկնաբանությունների տարբերություններ, ապա գործում է հոլանդերեն տարբերակը: